ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/103

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 27.12.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 27.12.2019թ.)

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության լիազորված ներկայացուցիչ՝

Գ. Հարությունյանի (լիազորագիր տրված՝ 13.01.2020թ.)

Քննելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից 30.12.2019թ. ներկայացված և 30.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/103 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով (չափաբաժնի համարը նշված է գնային առաջարկում) և առաջարկել 2.450.000 ՀՀ դրամ գնային առաջարկ /ընդհանուր գին/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնման ընընթացակարգի հարցումընթացակարգի 1 չափաբաժնի մասով «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն՝ բացակայում է գնման ծառայության անվանումը:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Համաձայն՝ Ընթացակարգի հրավերի 5.2 կետի՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական

բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա) մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման.

Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

Ընկերությունը նշել է, որ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1 չափաբաժնին:

Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ վերջինիս հայտը մերժվել էր այն հիմքով, որ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, այն է՝ բացակայում է գնման ծառայության անվանումը:

Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում, երբ Հավելված 1-ում «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման առաջին չափաբաժնին և Հավելված 2-ում գնային առաջարկում նշել է

չափաբաժնի համարը և ներկայացրել գնային առաջարկ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը մերժելու՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ձևական պահանջը չպահպանելու հիմքով, այլն՝ ներկայացված գնային առաջարկում գնման ծառայության անվանումը բացակայելու հիմքով, քանի որ Հավելված 2-ում չափաբաժնի համարը ճիշտ է նշված և արդեն իսկ պարզ է, որ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել միայն առաջին չափաբաժնի մասով:

Վերոհիշյալը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Ընթացակարգի հրավերի 5.2 կետը և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում են մասնակցի ներկայացրած գնային առաջարկում անհամապատասխանությունների հնարավոր դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման և հաշվի առնելով, որ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 2-ում առկա է միայն գնման ծառայության անվանման բացակայելու հանգամանքը, որը կապված չէ բուն գնային առաջարկի՝ հաշվարկի հետ, ուստի գտնում ենք նման հանգամանքը հիմք չէր մասնակցի հայտը մերժելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ նման հանգամանքի հիմքով, որը անվավեր չի դարձնում ներկայացված գնային առաջարկը, մերժվել է էժան գին ներկայացրած «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը, ինչի արդյունքում պետությունը, ենթադրաբար, ստիպված է լինելու պայմանագիր կնքել հաջորդ տեղ զբաղեցնող և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար Ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով

գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի գործողությունները եղել են իրավաչափ, քանի որ Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև Կարգով սահմանված է, որ Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում բացակայել է գնման ծառայության անվանումը, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/103 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/103 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է գնային առաջարկի՝ հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով, մասնավորապես գնային առաջարկում բացակայում է գնման ծառայության անվանումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի 30.12.2019թ. բողոքը, «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի 5.2-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Ինտերնետ կապի տրամադրման և տվյալների փոխանցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է գնային առաջարկի՝ հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով, մասնավորապես գնային առաջարկում բացակայում է գնման ծառայության անվանումը:

«ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, ծառայության անվանումը լրացված չէ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Այսպես՝ վերը նշված նորմով հստակ կարգավորված է բոլոր այն դեպքերը, երբ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 5.2-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ընդ որում Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոնշվածը՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման և գնահատման նիստում, մերժելով Ընկերության հայտը, այն հիմքով, որ գնային առաջարկի մեջ Ընկերությունը «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը» դաշտում չի նշել ծառայության անվանումը, դիտարկելով որպես հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, գործել է Կարգի 32-րդ կետի 2-րդ, Կարգի 40-րդ կետի 4-րդ և Ընթացակարգի հրավերի 5.2-րդ ենթակետերի պահանջների պահպանմամբ, ուստի գտնում եմ, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՔրթոսսՆեթ» ՍՊԸԸ-ի կողմից 30.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**